



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.geggharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

30 հունվարի 2025 թվականի թիվ 190-Ա


**ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ
ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՏՆՕՐԻՆՄԱՆ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, համաձայն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ կետի, ՀՀ կառավարության՝ 18.05.2006թ. «Ինքնական կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» թիվ 912-Ն որոշման 34-36 կետերի պահանջների, հաշվի առնելով քաղ. Արմեն Պետեյանի դիմումը՝ Սևան համայնք, ք. Սևան Կոմիտասի փողոց թիվ 1 / 12 հասցեում կառուցված 23.4քմ մակերեսով ավտոտնակը, 13.25քմ մակերեսով նկուղը, զբաղեցրած ու սպասարկման համար նախատեսված 23.4քմ մակերեսով հողատարածքն ուղղակի գործարքով իրեն վաճառելու մասին, նկատի ունենալով, որ դրանք ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողատեսք չեն հանդիսանում, **որոշում եմ.**

1. Սևան համայնք, ք. Սևան, Կոմիտասի փողոց թիվ 1 / 12 հասցեում գտնվող, Սևան համայնքի ղեկավարի՝ 28.12.2023թ. թիվ 2161-Ա որոշմամբ օրինական և համայնքային սեփականություն ճանաչված, 16.12.2024թ. պետական գրանցում ստացած 23.4քմ մակերեսով ավտոտնակը՝ 1քմ՝ 1969 դրամ, 13.25քմ մակերեսով նկուղը՝ 1քմ՝ 3938դրամ, 23.4քմ մակերեսով հողատարածքը՝ 1քմ 4441.8 դրամ, ուղղակի գործարքի միջոցով վաճառել ՀՀ կառավարության՝ 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման 34-րդ կետով սահմանված գնման նախապատվությունը ստանալուց հետո՝ 15 աշխատանքային օրվա ընթացքում համապատասխան դիմում ներկայացրած քաղ. Արմեն Տիգրանի Պետեյանին:
2. Քաղ. Արմեն Պետեյանի հետ կնքել առուվաճառքի պայմանագիր և սահմանել, որ առուվաճառքի հետ կապված ծախսերն իրականացվում են գնորդի հաշվին:
3. Սույն որոշումը հիմք է պետական գրանցում ստանալու համար:
4. Սույն որոշումն ուժի մեջ է՝ օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

30 հունվարի 2025 թվականի թիվ 191-Ա

**ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 18.05.2006թ. N 731-Ն որոշումով, 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման 8-րդ, 8.1-րդ 9-րդ, 11-րդ, 18-րդ կետերով ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ և հիմք ընդունելով քաղ. Արման Հովսեփյանի դիմումը՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող, Սևան համայնք, ք. Սևան, Սյունյաց փողոց թիվ 15 / 25 հասցեում գտնվող 15.54քմ մակերեսով հողատարածքում ավտոտնակի քանդման և ինքնակամ կառուցված 15.54քմ մակերեսով ավտոտնակի կառուցման աշխատանքներն օրինական ճանաչելու մասին, նկատի ունենալով, որ շինությունների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, **որոշում եմ.**

1. Սեփականության իրավունքով Արման Վարդանի Հովսեփյանին պատկանող, Սևան համայնք, ք. Սևան, Սյունյաց փողոց թիվ 15 / 25 հասցեում գտնվող 15.54քմ մակերեսով հողատարածքում ավտոտնակի քանդման և ինքնակամ կառուցված 15.54քմ մակերեսով ավտոտնակի / ներքին մակերեսը՝ 14.84քմ/ կառուցման աշխատանքները ճանաչել օրինական /հաշվառման տեղեկանք՝ 2022WWWWWV/, անշարժ գույքի համար տրամադրել Սևան համայնք, ք. Սևան, Սյունյաց փողոց թիվ 15 / 26 ավտոտնակ հասցե՝ համայնքի բյուջե մուծելով օրինականացվող շինությունների յուրաքանչյուր 1քմ-ի համար՝ 1969 դրամ:
2. Սույն որոշման ընդունման օրվանից սահմանված գումարը 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում՝ սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:
3. Սույն որոշումն ուժի մեջ է՝ օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.egharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

30 հունվարի 2025 թվականի թիվ 192-Ա

ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ և հիմք ընդունելով Սևան համայնք, գյուղ Սեմյոնովկա, 1-ին փողոց թիվ 63 և Սևան համայնք, գյուղ Սեմյոնովկա, 1-ին փողոց, թիվ 63 / 1 հողամաս հասցներում գտնվող անշարժ գույքերը /վկայականներ՝ 28082024-05-0033, 28082024-05-0032/ միավորելու, միավորված անշարժ գույքերի համար նոր հասցե տրամադրելու մասին, **որոշում եմ.**

1. Սևան համայնք, գյուղ Սեմյոնովկա, 1-ին փողոց թիվ 63 և Սևան համայնք, գյուղ Սեմյոնովկա, 1-ին փողոց թիվ 63 / 1 հողամաս հասցներում գտնվող անշարժ գույքերը միավորել՝ տրամադրելով Սևան համայնք, գյուղ Սեմյոնովկա, 1-ին փողոց թիվ 63 հողամաս հասցե:
2. Սույն որոշումը հիմք է պետական գրանցում ստանալու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է՝ հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ



2025 թվականի հունվարի 30
ք.Սևան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegarkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ


30 հունվարի 2025 թվականի թիվ 193-Ա

ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ՝ **որոշում եմ**.

1. Սևան համայնք, ք. Սևան, Դեմիրճյան փողոց թիվ 17 հասցեում գտնվող 0. 69256հա մակերեսով անշարժ գույքը /վկայական՝ 29042024-05-0068/, համաձայն ներկայացվող հատակագծերի, բաժանել 2 միավոր գույքի՝
 - 1) առաջին միավոր գույքի՝ 2438. 3քմ մակերեսով հողատարածքի և հողատարածքում գտնվող շինությունների համար տրամադրել՝ Սևան համայնք, ք. Սևան, Կ. Դեմիրճյան փողոց թիվ 17 մանկապարտեզ հասցե;
 - 2) երկրորդ միավոր գույքի՝ 1365. 67քմ մակերեսով հողատարածքի և հողատարածքում գտնվող շինությունների համար տրամադրել՝ Սևան համայնք, ք. Սևան, Կ. Դեմիրճյան փողոց, թիվ 17 / 1 մանկապարտեզ հասցե:
2. Սույն որոշումը հիմք է պետական գրանցում ստանալու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է՝ հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի հունվարի 30
ք.Սևան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.egharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ


30 հունվարի 2025 թվականի թիվ 194-Ա

**ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ
ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ և ՀՀ համայնքների «բնակավայրերի» քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի՝ N 2-6 եզրակացությունը՝ **որոշում են**.

1. Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, ք. Սևան, Սայաթ-Նովայի փողոց թիվ 31 / 3 հասցեում գտնվող, բնակավայրերի՝ նպատակային նշանակության, ընդհանուր օգտագործման՝ գործառնական նշանակության 0.0945հա մակերեսով հողատարածքի /վկայական՝ 03112017-05-0045/ նպատակային նշանակությունը փոխել բնակավայրերի՝ նպատակային նշանակության, հասարակական՝ գործառնական նշանակության:
2. Սույն որոշումը հիմք է պետական գրանցում ստանալու համար:
3. Պետական գրանցման ծախսերն իրականացվում են՝ համաձայն Սևան համայնքի ղեկավարի՝ 03. 01. 2025թ. N 2-Ա որոշման 1-ին կետի:
4. Սույն որոշումն ուժի մեջ է՝ հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ _____ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ



2025 թվականի հունվարի 30
ք.Սևան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.egharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

30 հունվարի 2025 թվականի թիվ 195-Ա

**ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ
ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ և ՀՀ համայնքների «բնակավայրերի» քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի՝ N 2-6 եզրակացությունը՝ **որոշում եմ**.

1. Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, ք. Սևան, Սայաթ-Նովայի փողոց թիվ 31 / 2 հասցեում գտնվող, բնակավայրերի՝ նպատակային նշանակության, ընդհանուր օգտագործման՝ գործառնական նշանակության 0.082294հա մակերեսով հողատարածքի /վկայական՝ 03112017-05-0040/ նպատակային նշանակությունը փոխել բնակավայրերի՝ նպատակային նշանակության, հասարակական՝ գործառնական նշանակության:
2. Սույն որոշումը հիմք է պետական գրանցում ստանալու համար:
3. Պետական գրանցման ծախսերն իրականացվում են՝ համաձայն Սևան համայնքի ղեկավարի՝ 03.01.2025թ. N 2-Ա որոշման 1-ին կետի:
4. Սույն որոշումն ուժի մեջ է՝ հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի հունվարի 30
ք.Սևան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.egharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

30 հունվարի 2025 թվականի թիվ 196-Ա


ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման, հիմք ընդունելով «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի հայտը՝ **որոշում եմ**.

1. «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ին տրամադրել նախագծման թույլտվություն Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, գ. Գեղամավան, Գեղամավան-Գագարին խճուղի թիվ 55 հասցեում գտնվող ԳԲԿ-ի կապիտալ նորոգման աշխատանքների համար:
2. «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ն պարտավոր է նախագծային փաստաթղթերը ներկայացնել համաձայնեցման և ստանալ շինարարության թույլտվություն:
3. Սույն որոշումն ուժի մեջ է՝ օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ



2025 թվականի հունվարի 30
ք.Սևան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.egharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ


30 հունվարի 2025 թվականի թիվ 197-Ա

**ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ՝ 21. 01.2025Թ. N 131-Ա ՈՐՈՇՄԱՆ
ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ **որոշում եմ.**

1. Սևան համայնքի ղեկավարի՝ 21.01.2025թ. «Հողատարածքը համայնքային սեփականություն ճանաչելու մասին» N 131-Ա որոշման 1-ին կետում կատարել հետևյալ փոփոխությունը՝
 - 1) «0. 01450հա մակերեսով» բառերի փոխարեն կարդալ «0. 00904հա մակերեսով» բառերը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է՝ հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի հունվարի 30
ք.Սևան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

30 հունվարի 2025 թվականի թիվ 198-Ա

**ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ՝ 21. 01.2025Թ. N 136-Ա ՈՐՈՇՄԱՆ
ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ **որոշում եմ.**

1. Սևան համայնքի ղեկավարի՝ 21.01.2025թ. «Հողատարածքն համայնքային սեփականություն ճանաչելու մասին» N 136-Ա որոշման 1-ին կետում կատարել հետևյալ լրացումը՝
 - 1) «Հողատարածքը ճանաչել համայնքային սեփականություն» բառերից հետո կարդալ «հողատարածքի նպատակային և գործառնական նշանակությունները համապատասխանեցնել Լճաշեն բնակավայրի գլխավոր հատակագծին՝ փոխելով հողամասի նպատակային և գործառնական նշանակությունները՝ հատուկ պահպանվող՝ նպատակային նշանակության, հանգստի համար նախատեսված՝ գործառնական նշանակության հողամասի» բառերի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է՝ հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի հունվարի 30
ք.Սևան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegarkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

30 հունվարի 2025 թվականի թիվ 199-Ա


**ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ
ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման 25, 27, 32 կետերով, հիմք ընդունելով քաղ. Աշոտ Բաղյանի դիմումը՝ ք. Սևան, Նաիրյան փողոց թիվ 175 հասցեում գտնվող բազմաբնակարան բնակելի շենքի 27 բնակարանին կից ինքնակամ կատարված շինարարական աշխատանքներն օրինականացնելու մասին, ինչպես նաև նկատի ունենալով, որ կատարված շինարարական աշխատանքների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հաշվի առնելով, որ ներկայացված է ք. Սևան, Նաիրյան փողոցի թիվ 175 բազմաբնակարան շենքի սեփականատերերի գրավոր համաձայնությունը, **որոշում եմ.**

1. Ք. Սևան, Նաիրյան փողոց թիվ 175 բազմաբնակարան շենքի սեփականատերերին անհատույց փոխանցվող հողատարածքի վրա ինքնակամ կառուցված 15.7քմ մակերեսով բնակարանը /ներքին մակերեսը՝ 15.36քմ/ ճանաչել օրինական /հաշվառման տեղեկանք՝ 2023ZMDVS8 /՝ համայնքի բյուջե մուծելով օրինականցվող շինությունների յուրաքանչյուր 1քմ-ի համար՝ 501.9 դրամ:
2. Սույն որոշման ընդունման օրվանից սահմանված գումարը 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում՝ սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:
3. Օրինական ճանաչել ք. Սևան, Նաիրյան փողոց թիվ 175 շենքում առկա ինքնակամ կառույցները:
4. Սույն որոշմամբ օրինականացված բնակելի նշանակության բնակարանի պետական գրանցումը հիմք է նաև զբաղեցրած հողամասի նկատմամբ շենքի բնակարանների և ոչ բնակելի տարածքների սեփականատերերի ընդհանուր բաժնային սեփականության փոփոխության գրանցման համար:
5. Սույն որոշումն ուժի մեջ է՝ օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegarkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ


30 հունվարի 2025 թվականի թիվ 200-Ա

**ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման 25,27,32 կետերով, հիմք ընդունելով քաղ. Մակիչ Հակոբյանի դիմումը՝ Սևան համայնք, գ. Գագարին, Գայի փողոց 8 շենքի հասցեում գտնվող բազմաբնակարան բնակելի շենքի թիվ 3 բնակարանին կից ինքնակամ կատարված շինարարական աշխատանքներն օրինականացնելու մասին, նկատի ունենալով, որ բնակելի շինությունը կառուցված է ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումներ չունեցող հողատարածքի վրա, կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, ինչպես նաև հաշվի առնելով, որ առկա է սեփականատերերի համաձայնությունը, **որոշում եմ.**

1. Սևան համայնք, գ. Գագարին, Գայի փողոց 8 բազմաբնակարան շենքի 3 հասցեում գտնվող թիվ 3 բնակարանին /վկայական՝ 03042017-05-0026/ կից ինքնակամ կառուցված 4.7քմ մակերեսով բնակելի շինությունը / ներքին մակերեսը՝ 4.07քմ/ ճանաչել օրինական /հաշվառման տեղեկանք՝ 2023GFZDTX/՝ համայնքի բյուջե վճարելով օրինականացվող յուրաքանչյուր 1քմ-ի համար՝ 362.7 դրամ:
2. Օրինական ճանաչել Սևան համայնք, գ. Գագարին, Գայի թիվ 8 հասցեում գտնվող բազմաբնակարան բնակելի շենքում առկա ինքնակամ կառույցը:
3. Սույն որոշման ընդունման օրվանից սահմանված գումարը 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում՝ սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:
4. Սույն որոշումն ուժի մեջ է՝ օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի հունվարի 30
ք.Սևան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegarkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

30 հունվարի 2025 թվականի թիվ 201-Ա

**ԻՆՔՆԱԿԱՍ ԿԱՏԱՐՎԱԾ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման 25,27,32 կետերով, հիմք ընդունելով քաղ. Մակիչ Հակոբյանի դիմումը՝ Սևան համայնք, գ. Գագարին, Գայի փողոց 8 բազմաբնակարան բնակելի շենքի թիվ 10 հասցեում գտնվող բնակարանին կից ինքնակամ կատարված շինարարական աշխատանքներն օրինականացնելու մասին, նկատի ունենալով, որ բնակելի շինությունը կառուցված է ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումներ չունեցող հողատարածքի վրա, կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, ինչպես նաև հաշվի առնելով, որ առկա է սեփականատերերի համաձայնությունը, **որոշում եմ.**

1. Սեփականության իրավունքով Մակիչ Սուրբատի Հակոբյանին պատկանող, Սևան համայնք, գ. Գագարին, Գայի փողոց 8 բազմաբնակարան շենքի թիվ 10 հասցեում գտնվող բնակարանին կից ինքնակամ կառուցված 4.7քմ մակերեսով բնակելի շինությունը / ներքին մակերեսը՝ 4.08քմ/ ճանաչել օրինական /հաշվառման տեղեկանք՝ 20238LTHHD/՝ համայնքի բյուջե վճարելով օրինականացվող յուրաքանչյուր 1քմ-ի համար՝ 362.7 դրամ:
2. Օրինական ճանաչել Սևան համայնք, գ. Գագարին, Գայի թիվ 8 հասցեում գտնվող բազմաբնակարան բնակելի շենքում առկա ինքնակամ կառույցը:
3. Սույն որոշման ընդունման օրվանից սահմանված գումարը 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում՝ սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:
4. Սույն որոշումն ուժի մեջ է՝ օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.egharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

31 հունվարի 2025 թվականի թիվ 202-Ա


**ԲՆԱԿԱՐԱՆԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 53-րդ հոդվածով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14³ հոդվածով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ՝ **որոշում եմ.**

1. Համաձայն ներկայացվող հատակագծի՝ 67.22քմ մակերեսով բնակարանը ճանաչել համայնքային սեփականություն՝ տրամադրելով Սևան համայնք, գ. Գագարին, Գայի փողոց 1 շենք թիվ 8 բնակարան հասցե:
2. Պետական գրանցման ծախսերն իրականացվում են՝ համաձայն Սևան համայնքի ղեկավարի՝ 03.01.2025թ. N 2-Ա որոշման 1-ին կետի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է՝ հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ



2025 թվականի հունվարի 31
ք.Սևան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegarkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

31 հունվարի 2025 թվականի թիվ 203-Ա

ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, ՀՀ կառավարության՝19.07.2007թ. թիվ 843-Ն որոշման, Սևան համայնքի ավագանու՝ 19.11.2024թ. N146-Ն որոշման 1-ին կետով սահմանված թիվ 1 հավելվածի 7-րդ կետի ա և բ ենթակետերի, հիմք ընդունելով «Էդգար Մկրտչյան» ԱՁ -ի կողմից ներկայացված հայտը՝ **որոշում եմ.**

1. «Էդգար Մկրտչյան» ԱՁ -ին / գործունեությունը՝ Գեղարքունիքի մարզ, Սևան- Երևան մայրուղի 57 կմ թիվ 3 հասցե / տրամադրել 2025 թվականի համար՝
 - 1) ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառքի թույլտվություն՝ Սևան համայնքի բյուջեի 900165101354 հաշվեհամարին վճարելով տեղական տուրք 52. 400 դրամ;
 - 2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն՝ Սևան համայնքի բյուջեի 900165101339 հաշվեհամարին վճարելով տեղական տուրք՝ 52. 400 դրամ :
2. Սույն որոշումն ուժի մեջ է՝ առձեռն կամ օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից;

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի հունվարի 31
ք.Սևան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

31 հունվարի 2025 թվականի թիվ 204-Ա

ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, ՀՀ կառավարության՝ 19.07.2007թ. թիվ 843-Ն որոշման, Սևան համայնքի ավագանու՝ 19.11.2024թ N146-Ն որոշման 1-ին կետով սահմանված թիվ 1 հավելվածի 7-րդ կետի ա և բ ենթակետերի, հիմք ընդունելով «Սանի Սիզն» ՍՊԸ -ի կողմից ներկայացված հայտը՝ **որոշում եմ.**

1. «Սանի Սիզն» ՍՊԸ-ին / գործունեությունը՝ Սևան համայնք, Չկալովկա գյուղի ավամերձ տարածք հասցե / տրամադրել 2025թ. 1- ին և 2-րդ եռամսյակների համար՝
 - 1) ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառքի թույլտվություն՝ Սևան համայնքի բյուջեի 900165101354 հաշվեհամարին վճարելով տեղական տուրք՝ 25.000դրամ, յուրաքանչյուր եռամսյակի համար;
 - 2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն՝ Սևան համայնքի բյուջեի 900165101339 հաշվեհամարին վճարելով տեղական տուրք 25.000 դրամ, յուրաքանչյուր եռամսյակի համար:
2. Սույն որոշումն ուժի մեջ է՝ առձեռն կամ օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի հունվարի 31
ք.Սևան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.egharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

31 հունվարի 2025 թվականի թիվ 205-Ա

**ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ
ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման, հիմք ընդունելով քաղ. Բաբկեն Ղուկասյանի հայտը՝ **որոշում եմ.**

1. Բաբկեն Ղուկասյանին տրամադրել նախագծման թույլտվություն Սևան համայնք, ք. Սևան, Նաիրյան փողոց թիվ 161 / 1 հասցեում գտնվող հողատարածքում առևտրի սրահի կառուցման համար:
2. Բաբկեն Ղուկասյանը պարտավոր է նախագծային փաստաթղթերը ներկայացնել համաձայնեցման և ստանալ շինարարության թույլտվություն:
3. Սույն որոշումն ուժի մեջ է՝ հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ



2025 թվականի հունվարի 31
ք.Սևան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegarkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

31 հունվարի 2025 թվականի թիվ 206-Ա

ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 8-րդ, 16-րդ կետերով և 118-րդ հոդվածով, ՀՀ Կառավարության՝ 29.12.2005թ. N 2387-Ն որոշմամբ, հիմք ընդունելով քաղ. Աղվան Գևորգյանի դիմումը՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող, Սևան համայնք, ք. Սևան, Ա. Գրիբոյեդով փողոց թիվ 12 / 50 հասցեում գտնվող 13.71քմ մակերեսով մառանի զբաղեցրած և սպասարկման համար նախատեսված հողատարածքի հողհատկացման հիմքերը վերականգնելու մասին, հաշվի առնելով, որ հողամասը ընդգրկված չէ ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, **որոշում եմ.**

1. Վերականգնել՝ սեփականության իրավունքով Աղվան Գևորգյանին պատկանող, Սևան համայնք, ք. Սևան, Ա. Գրիբոյեդով փողոց թիվ 12 / 50 հասցեում գտնվող 13.71քմ մակերեսով մառանի զբաղեցրած և սպասարկման համար նախատեսված 15.75քմ մակերեսով հողատարածքի հողհատկացման հիմքերը, 15.75քմ մակերեսով հողատարածքի նկատմամբ տրամադրել անհատույց սեփականության իրավունք՝ անշարժ գույքի առքուվաճառքի նվիրատվության կամ փոխանակման դեպքում՝ հողամասի տվյալ պահին գործող կադաստրային արժեքը վճարելու պայմանով:
2. Սույն որոշումը հիմք է պետական գրանցում ստանալու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է՝ օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի հունվարի 31
ք.Սևան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegarkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ


31 հունվարի 2025 թվականի թիվ 207-Ա

**ՀՈՂԱՄԱՍԻ ԳԾԱՅԻՆ ՉԱՓԵՐԻ ԵՎ ԵՐԿՐԱՋԱՓԱԿԱՆ
ՊԱՏԿԵՐԻ ՈՒՂՂՄԱՆ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 29. 04. 2021թ. N 698-Ն որոշմամբ և հաշվի առնելով, որ Սևան համայնքի հերթապահ էլ. քարտեզում առկա են անճշտություններ, որի հետևանքով անհրաժեշտություն է առաջացել փոփոխել՝ սեփականության իրավունքով քաղ. Հոմերոս Վարդանյանին պատկանող, Սևան համայնք, ք. Սևան, Կ. Դեմիրճյան փողոց թիվ 3 / 1 հասցեում գտնվող անշարժ գույքի /վկայական՝ 1100313, տրված՝ 24. 08. 2005թ. / գծային չափերը և երկրաչափական պատկերը ուղղելու մասին, հիմք ընդունելով որակավորում ունեցող անձի կողմից կատարված չափագրությունների արդյունքները՝ **որոշում եմ.**

1. Ուղղել և հաստատել՝ Սևան համայնք, ք. Սևան, Կ. Դեմիրճյան փողոց թիվ 3 / 1 հասցեում գտնվող հողատարածքի գծային չափերը և երկրաչափական պատկերը:
2. Սույն որոշումը հիմք է պետական գրանցում ստանալու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է՝ հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի հունվարի 31
ք.Սևան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegarkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

31 հունվարի 2025 թվականի թիվ 208-Ա

**ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ՝ 03.09.2024Թ.
N 1906-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ **որոշում եմ.**

1. Սևան համայնքի ղեկավարի՝ 03.09.2024թ. «Բնակելի նշանակության շինությունները ինքնակամ ճանաչելու մասին» N 1906-Ա որոշման 1-ին կետում կատարել հետևյալ փոփոխությունը՝
 - 1) «Հայկանուշ Հովհաննեսի Գաբրիելյանին /ծնված՝ 15.07.1985թ./» բառերի փոխարեն կարդալ «Հայկանուշ Հովհաննեսի Մկրտումյանին /ծնված՝ 15.07.1985թ./» բառերը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է՝ հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի հունվարի 31
ք.Սևան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.egharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

31 հունվարի 2025 թվականի թիվ 209-Ա

**ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 53-րդ հոդվածով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14³ հոդվածով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ՝ **որոշում եմ.**

1. Համաձայն ներկայացվող հատակագծի՝ 0.00676հա մակերեսով հողամասը /ք. Սևան/ ճանաչել համայնքային սեփականություն, համապատասխանեցնել Սևան քաղաքի գլխավոր հատակագծին, տրամադրել Սևան համայնք, ք. Սևան, Նաիրյան փողոց թիվ 148 / 2 հողամաս հասցե:
2. Պետական գրանցման ծախսերն իրականացվում են՝ համաձայն Սևան համայնքի ղեկավարի՝ 03. 01. 2025թ. N 2-Ա որոշման 1-ին կետի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է՝ հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի հունվարի 31
ք.Սևան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

31 հունվարի 2025 թվականի թիվ 210-Ա

**ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 53-րդ հոդվածով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14³ հոդվածով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ՝ **որոշում եմ.**

1. Համաձայն ներկայացվող հատակագծի՝ 0.01800հա մակերեսով հողամասը /ք. Սևան/ ճանաչել համայնքային սեփականություն, համապատասխանեցնել Սևան քաղաքի գլխավոր հատակագծին, տրամադրել Սևան համայնք, ք. Սևան, Նաիրյան փողոց թիվ 148 / 16 հողամաս հասցե:
2. Պետական գրանցման ծախսերն իրականացվում են՝ համաձայն Սևան համայնքի ղեկավարի՝ 03. 01. 2025թ. N 2-Ա որոշման 1-ին կետի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է՝ հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի հունվարի 31
ք.Սևան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

31 հունվարի 2025 թվականի թիվ 211-Ա

**ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 53-րդ հոդվածով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14³ հոդվածով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ՝ **որոշում եմ.**

1. Համաձայն ներկայացվող հատակագծի՝ 0.0705հա մակերեսով հողամասը /գ. Գագարին/ ճանաչել համայնքային սեփականություն, համապատասխանեցնել Սևան քաղաքի գլխավոր հատակագծին՝ տրամադրելով Սևան համայնք, գ. Գագարին, Հ. Շիրազի փողոց թիվ 9 / 1 հողամաս հասցե:
2. Պետական գրանցման ծախսերն իրականացվում են՝ համաձայն Սևան համայնքի ղեկավարի՝ 03. 01. 2025թ. N 2-Ա որոշման 1-ին կետի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է՝ հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ:



ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի հունվարի 31
ք.Սևան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegarkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

31 հունվարի 2025 թվականի թիվ 212-Ա

**ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐՈՒՑՎԱԾ
ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹՆԵՐԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Քննելով Սևանի համայնքապետարանում հարուցված վարչական վարույթի գործերը պարզեցի. ՀՀ ՆԳՆ ոստիկանության պարեկային ծառայության Գեղարքունիքի մարզի գումարտակի կողմից 03.12.2024թ. արձանագրվել է, որ Չարենց փողոցի 104 հասցեի բնակիչ Սևակ Հովհաննիսյանի կողմից մայթին տեղադրվել են քարե սալիկներ և պեմզասալիկներ, Կոմիտաս փողոցի թիվ 3 հասցեի բնակիչ Հովիկ Միքայելյանը մայթի վրա տեղադրել է ավազի կույտ, Կոմիտաս փողոցի թիվ 16 հասցեի բնակիչ Թադևոս Սիմոնյանը մայթի վրա տեղադրել է ավազի կույտ, Չարենց փողոցի թիվ 75 հասցեի բնակիչ Վարդգես Քոչարյանը ճանապարհի վրա տեղադրել է ավազի կույտ, Կոմիտաս փողոցի թիվ 40 տան բնակիչ Անուշավան Ղարիբյանը մայթի վրա տեղադրել է ավազի կույտ և սպիտակ մանրաքարեր, Մյասնիկյան փողոցի թիվ 76 տան բնակիչ Ավետիք Խաչատրյանը մայթի վրա տեղադրել է ավազի կույտ: ՀՀ ՆԳՆ համայնքային ոստիկանության Սևան բաժնի աշխատակիցների կողմից 28.11.2024թ. արձանագրվել է, որ ք. Սևան, Ազատության փողոց, 76 տան բնակիչ Տաթևիկ Բրիսկյանի կողմից մայթին տեղադրվել է ավազի կույտ: Հարուցված վարչական վարույթի շրջանակներում վերը նշված անձանց ուղարկվել են ծանուցումներ՝ մայթերից ավազի և այլ շինարարական նյութերի հեռացման զգուշացմամբ: Սևանի համայնքի ղեկավարի կողմից կազմված տեղազննման հանձնաժողովը առաջին ստուգայցն իրականացրել է 2024 թվականի դեկտեմբերի 20-ին, իսկ երկրորդ ստուգողական այցն իրականացվել է 15.01.2024 թվականին: Տեխնիկական արդյունքում արձանագրվել է, որ բոլոր նշված հասցեներում իրականացվել են մաքրման աշխատանքներ և վերացվել են իրավախախտումները: Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետի, ՀՀ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի 247-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներով՝ **որոշում եմ.**

1. Կարճել քաղաքացիներ Հովիկ Միքայելյանի, Թադևոս Սիմոնյանի, Վարդգես Քոչարյանի, Սևակ Հովհաննիսյանի, Տաթևիկ Բրիսկյանի, Ավետիք Խաչատրյանի, Անուշավան Ղարիբյանի նկատմամբ հարուցված վարչական վարույթները:
2. Զգուշացնել քաղաքացիներին՝ եթե իրավախախտման դեպքերը կկրկնվեն, ապա նրանք պատասխանատվության կենթարկվեն օրենքով սահմանված կարգով:
3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել 15-օրյա ժամկետում կամ վարչական դատարան երկու ամսվա ընթացքում:
4. Սույն որոշումն ուժի մեջ է՝ անձեռն կամ օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

31 հունվարի 2025 թվականի թիվ 213-Ա

ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, ՀՀ կառավարության՝19.07.2007թ. թիվ 843-Ն որոշման, Սևան համայնքի ավագանու՝ 19.11.2024թ. N461-Ն որոշման 1-ին կետով սահմանված թիվ 1 հավելվածի 10 -րդ կետի ա) ենթակետի, հիմք ընդունելով «Սանի Սիզն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը՝ **որոշում եմ.**

1. «Սանի Սիզն» ՍՊԸ-ին / գործունեությունը՝ Սևան համայնք, Չկալովկա գյուղի ավիամերձ տարածք հասցե / տրամադրել 2025թ. 1-ին և 2-րդ եռամսյակների համար՝ հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվություն՝ Սևան համայնքի բյուջեի 900165101396 հաշվեհամարին վճարելով տեղական տուրք՝ 21.000դրամ, յուրաքանչյուր եռամսյակի համար :
2. Սույն որոշումն ուժի մեջ է՝ առձեռն կամ օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի հունվարի 31
ք.Սևան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegarkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

03 փետրվարի 2025 թվականի թիվ 214-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԵՎԱՆ
ՀԱՄԱՅՆՔՈՒՄ «ԼԻՆԵՆՔ ԱՌՈՂՋ» ԽՈՐԱԳՐՈՎ «ԳԵՂԱՐՔՈՒՆՅԱՑ
ՁՄԵՌ-2025» ՄԱՐԶԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ
ԵՎ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 47-րդ հոդվածի 1-ին մասի 4)-րդ կետի, «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի պահանջներով՝ **որոշում եմ.**

1. Հաստատել՝
 - 1) Սևան համայնքում «Գեղարքունյաց ձմեռ-2025» մարզամշակութային միջոցառման կազմակերպման և անցկացման կազմկոմիտեի կազմը՝ համաձայն թիվ 1 հավելվածի:
 - 2) Սևան համայնքում «Գեղարքունյաց ձմեռ-2025» մարզամշակութային միջոցառման կազմակերպման և անցկացման կանոնակարգը՝ համաձայն թիվ 2 հավելվածի:
2. Սևան համայնքում «Գեղարքունյաց ձմեռ-2025» մարզամշակութային միջոցառումն անցկացնել 2025թվականի փետրվարի 13-ին՝ «Լինենք առողջ» խորագրով:
3. Հանձնաժողովի նախագահին՝
 - 1) Ներկայացնել անցկացվող մարզամշակութային միջոցառման նախապատրաստական աշխատանքների վերաբերյալ տեղեկատվություն մինչև 2025թվականի փետրվարի 10-ը:
 - 2) Համագործակցել ՆԳՆ Սևանի Ոստիկանության Սևանի բաժնի և «Սևանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի հետ՝ ապահովելով մասնակիցների անվտանգությունը և առաջին բժշկական օգնությունը:
4. «Գեղարքունյաց ձմեռ-2025» մարզամշակութային միջոցառման անցկացման և արդյունքների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացնել Սևանի համայնքապետարան լուսաբանման և ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմ ներկայացնելու համար:
5. Սույն որոշումն ուժի մեջ է՝ հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ



2025 թվականի փետրվարի 03
ք.Սևան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegarkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

03 փետրվարի 2025 թվականի թիվ 215-Ա

**ՀՈՂԱՏԱՐԱԾՔԻ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔԻ
ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 70-րդ հոդվածով, Սևան համայնքի ավագանու՝ 17.12.2024թ. N175 Ա-Ն որոշմամբ և հիմք ընդունելով 24. 01.2025թ. կայացած աճուրդ-վաճառքի արդյունքների վերաբերյալ կազմված արձանագրությունները, **որոշում եմ.**

1. Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, գ. Սեմյոնովկա, 90 հողամաս հասցեում գտնվող, ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածին չհամապատասխանող, բնակավայրերի՝ նպատակային նշանակության 0.11529 հա մակերեսով հողատարածքը, ըստ աճուրդ-վաճառքի արդյունքների՝ 171780 դրամ, օտարել աճուրդում հաղթող ճանաչված Գեղարքունիքի մարզ, ք. Սևան, Չարենցի փողոց 152 տան բնակիչ Նարեկ Ժորայի Ազիզյանին:
2. Սակարկությունների ժամանակ ձևավորված գինը գնորդի կողմից 10 օրվա ընթացքում համայնքի բյուջե մուծելու դեպքում՝ վերջինիս հետ կնքել հողամասի օտարման պայմանագիր:
3. Զգուշացնել Նարեկ Ժորայի Ազիզյանին՝ հատկացված տարածքում շինարարական աշխատանքներն սկսել միայն համապատասխան շինարարական փաստաթղթերի փաթեթը համայնքապետարանի հետ համաձայնեցնելուց և շինարարության թույլտվություն ստանալուց հետո:
4. Սույն որոշմամբ ձեռք բերված հողամասի սեփականության իրավունքը ենթակա է պետական գրանցման:
5. Սույն որոշումն ուժի մեջ է՝ հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի փետրվարի 03
ք.Սևան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegarkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

03 փետրվարի 2025 թվականի թիվ 216-Ա


**ՀՈՂԱՏԱՐԱԾՔԻ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔԻ
ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 70-րդ հոդվածով, Սևան համայնքի ավագանու՝ 17.12.2024թ. N 175 Ա-Ն որոշմամբ և հիմք ընդունելով 24. 01.2025թ. կայացած աճուրդ-վաճառքի արդյունքների վերաբերյալ կազմված արձանագրությունները՝ **որոշում եմ.**

1. Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, գ. Գեղամավան հասցեում գտնվող, ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածին չհամապատասխանող, գյուղատնտեսական՝ նպատակային նշանակության 1.11553 հա մակերեսով հողատարածքը, ըստ աճուրդ-վաճառքի արդյունքների՝ 126000 դրամ , օտարել աճուրդում հաղթող ճանաչված Գեղարքունիքի մարզ, գ. Գեղամավան, 2-րդ փողոց, 6-րդ նրբանցք, 32 տուն հասցեի բնակիչ Սանասար Գուրգենի Սաղաթեյանին:
2. Սակարկությունների ժամանակ ձևավորված գինը գնորդի կողմից 10 օրվա ընթացքում համայնքի բյուջե մուծելու դեպքում՝ վերջինիս հետ կնքել հողամասի օտարման պայմանագիր:
3. Զգուշացնել Սանասար Գուրգենի Սաղաթեյանին՝ հատկացված տարածքում շինարարական աշխատանքներն սկսել միայն համապատասխան շինարարական փաստաթղթերի փաթեթը համայնքապետարանի հետ համաձայնեցնելուց և շինարարության թույլտվություն ստանալուց հետո:
4. Սույն որոշմամբ ձեռք բերված հողամասի սեփականության իրավունքը ենթակա է պետական գրանցման:
5. Սույն որոշումն ուժի մեջ է՝ հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ



2025 թվականի փետրվարի 03
ք.Սևան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

03 փետրվարի 2025 թվականի թիվ 217-Ա

**ՀՈՂԱՏԱՐԱԾՔԻ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔԻ
ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 70-րդ հոդվածով, Սևան համայնքի ավագանու՝ 17.12.2024թ. N175 Ա-Ն որոշմամբ և հիմք ընդունելով 24. 01.2025թ. կայացած աճուրդ-վաճառքի արդյունքների վերաբերյալ կազմված արձանագրությունները, **որոշում եմ.**

1. Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, ք. Սևան, Նաիրյան փողոց թիվ 187 / 76 հողամաս հասցեում գտնվող, ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածին չհամապատասխանող, բնակավայրերի՝ նպատակային նշանակության 0.0104 հա մակերեսով հողատարածքը, ըստ աճուրդ-վաճառքի արդյունքների՝ 307910 դրամ, օտարել աճուրդում հաղթող ճանաչված Գեղարքունիքի մարզ, ք. Սևան, Նաիրյան փողոց, 187 շենք, 6 բնակարանի բնակիչ Արայիկ Վաղարշակի Հակոբյանին:
2. Սակարկությունների ժամանակ ձևավորված գինը գնորդի կողմից 10 օրվա ընթացքում համայնքի բյուջե մուծելու դեպքում՝ վերջինիս հետ կնքել հողամասի օտարման պայմանագիր:
3. Զգուշացնել Արայիկ Վաղարշակի Հակոբյանին՝ հատկացված տարածքում շինարարական աշխատանքներն սկսել միայն համապատասխան շինարարական փաստաթղթերի փաթեթը համայնքապետարանի հետ համաձայնեցնելուց և շինարարության թույլտվություն ստանալուց հետո:
4. Սույն որոշմամբ ձեռք բերված հողամասի սեփականության իրավունքը ենթակա է պետական գրանցման:
5. Սույն որոշումն ուժի մեջ է՝ հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝  ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ



2025 թվականի փետրվարի 03
ք.Սևան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegarkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

03 փետրվարի 2025 թվականի թիվ 218-Ա

**ՀՈՂԱՏԱՐԱԾՔԻ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔԻ
ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 70-րդ հոդվածով, Սևան համայնքի ավագանու՝ 17.12.2024թ. N175 Ա-Ն որոշմամբ և հիմք ընդունելով 24. 01.2025թ. կայացած աճուրդ-վաճառքի արդյունքների վերաբերյալ կազմված արձանագրությունները, **որոշում եմ.**

1. Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, ք. Սևան, գ. Գագարին, Կոմիտասի փողոց թիվ 4 / 11 հողամաս հասցեում գտնվող, ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածին չհամապատասխանող, բնակավայրերի՝ նպատակային նշանակության 0.003 հա մակերեսով հողատարածքը, ըստ աճուրդ-վաճառքի արդյունքների՝ 39560 դրամ, օտարել աճուրդում հաղթող ճանաչված Գեղարքունիքի մարզ, ք. Սևան, գ. Գագարին, Երիտասարդական փողոց, 6 շենք, 4 բնակարանի բնակիչ Գոռ Կամոյի Համբարձումյանին:
2. Սակարկությունների ժամանակ ձևավորված գինը գնորդի կողմից 10 օրվա ընթացքում համայնքի բյուջե մուծելու դեպքում՝ վերջինիս հետ կնքել հողամասի օտարման պայմանագիր:
3. Զգուշացնել Գոռ Կամոյի Համբարձումյանին՝ հատկացված տարածքում շինարարական աշխատանքներն սկսել միայն համապատասխան շինարարական փաստաթղթերի փաթեթը համայնքապետարանի հետ համաձայնեցնելուց և շինարարության թույլտվություն ստանալուց հետո:
4. Սույն որոշմամբ ձեռք բերված հողամասի սեփականության իրավունքը ենթակա է պետական գրանցման:
5. Սույն որոշումն ուժի մեջ է՝ հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegarkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

03 փետրվարի 2025 թվականի թիվ 219-Ա

**ՀՈՂԱՏԱՐԱԾՔԻ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔԻ
ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 70-րդ հոդվածով, Սևան համայնքի ավագանու՝ 17.12.2024թ. N175 Ա-Ն որոշմամբ և հիմք ընդունելով 24. 01.2025թ. կայացած աճուրդ-վաճառքի արդյունքների վերաբերյալ կազմված արձանագրությունները, **որոշում եմ.**

1. Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, ք. Սևան, գ. Գագարին, Մարշալ Բաղրամյան փողոց թիվ 3 / 7 հողամաս հասցեում գտնվող, ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածին չհամապատասխանող, բնակավայրերի՝ նպատակային նշանակության 0.0036 հա մակերեսով հողատարածքը, ըստ աճուրդ-վաճառքի արդյունքների՝ 47300 դրամ, օտարել աճուրդում հաղթող ճանաչված Գեղարքունիքի մարզ, ք. Սևան, գ. Գագարին, Բաղրամյան փողոց, 3 շենք, 15 բնակարանի բնակիչ Հրանտ Մաքսիմի Պողոսյանին:
2. Սակարկությունների ժամանակ ձևավորված գինը գնորդի կողմից 10 օրվա ընթացքում համայնքի բյուջե մուծելու դեպքում՝ վերջինիս հետ կնքել հողամասի օտարման պայմանագիր:
3. Զգուշացնել Հրանտ Մաքսիմի Պողոսյանին՝ հատկացված տարածքում շինարարական աշխատանքներն սկսել միայն համապատասխան շինարարական փաստաթղթերի փաթեթը համայնքապետարանի հետ համաձայնեցնելուց և շինարարության թույլտվություն ստանալուց հետո:
4. Սույն որոշմամբ ձեռք բերված հողամասի սեփականության իրավունքը ենթակա է պետական գրանցման:
5. Սույն որոշումն ուժի մեջ է՝ հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ



2025 թվականի փետրվարի 03
ք.Սևան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegarkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

03 փետրվարի 2025 թվականի թիվ 220-Ա

**ՀՈՂԱՏԱՐԱԾՔԻ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔԻ
ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 70-րդ հոդվածով, Սևան համայնքի ավագանու՝ 17.12.2024թ. N175 Ա-Ն որոշմամբ և հիմք ընդունելով 24. 01.2025թ. կայացած աճուրդ-վաճառքի արդյունքների վերաբերյալ կազմված արձանագրությունները, **որոշում եմ.**

1. Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, ք. Սևան, Խ. Աբովյան փողոց թիվ 2 / 6 հողամաս հասցեում գտնվող, ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածին չհամապատասխանող, բնակավայրերի՝ նպատակային նշանակության 0. 00838 հա մակերեսով հողատարածքը, ըստ աճուրդ-վաճառքի արդյունքների՝ 217800 դրամ, օտարել աճուրդում հաղթող ճանաչված Գեղարքունիքի մարզ, գ. Լճաշեն, 26-րդ փողոց, 2-րդ նրբանցք, 2 տան բնակիչ Քրիստինե Ռազմիկի Թոռյանին:
2. Սակարկությունների ժամանակ ձևավորված գինը գնորդի կողմից 10 օրվա ընթացքում համայնքի բյուջե մուծելու դեպքում՝ վերջինիս հետ կնքել հողամասի օտարման պայմանագիր:
3. Զգուշացնել Քրիստինե Ռազմիկի Թոռյանին՝ հատկացված տարածքում շինարարական աշխատանքներն սկսել միայն համապատասխան շինարարական փաստաթղթերի փաթեթը համայնքապետարանի հետ համաձայնեցնելուց և շինարարության թույլտվություն ստանալուց հետո:
4. Սույն որոշմամբ ձեռք բերված հողամասի սեփականության իրավունքը ենթակա է պետական գրանցման:
5. Սույն որոշումն ուժի մեջ է՝ հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ



